ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 5019-Ա « 12 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի Հ.3951-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, հաշվի առնելով ըստ օրենքի 07.04.2025 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.11.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 8-ի «Մարշալ Խուդյակովի փողոցի հ.89/5 բնակելի տան նկատմամբ Գևորգ Պերճի Բարսեղյանի գույքային իրավունքները վերականգնելու, 16.98քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3951-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերում «Գևորգ Պերճի Բարսեղյանի» բառերը փոխարինել «Պերճ Գևորգի Բարսեղյանի և Գայանե Միքայելի Շահմուրադյանի » բառերով.

2) Որոշման նախաբանում «Գևորգ Պերճի Բարսեղյանի (ծնված 12.02.1961թ.)» բառերը փոխարինել «Պերճ Գևորգի Բարսեղյանի (ծնված 03.02.1991թ.) և «Գայանե Միքայելի Շահմուրադյանի (ծնված 07.03.1972թ.)» բառերով.

3) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ